Կուլտուրայի ֆակուլտետի Երաժշտության ամբիոնի

Հունվարի 20-ի նիստի

Արձանագրություն թիվ 4

Օրակարգ՝

1. 2019-2020 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի Google Classroom համակարգի դասընթացների ստեղծման և տեղադրվող առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների հաստատման մասին
2. Էլեկտրոնային հանձնարարություններ տրամադրելու մասին հարցը
3. Էլեկտրոնային հարթակում դասախոսների ուսումնական գործունեության մշտադիտարկման ցուցիչների վերաբերյալ հարցը
4. Երաժշտության ամբիոնի մշտադիտարկող հանձնաժողովի վերահաստատման հարցը: Քննարկվեց հանձնաժողովի կազմը
5. Ուսումնական կիսամյակների ավարտին դասախոսների հաշվետվությունների հարցը

Լսեցին՝ 2019-2020 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի Google Classroom համակարգի դասընթացների ստեղծման և տեղադրվող առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների հաստատման մասին հարցերը:

Արտահայտվեցին՝ Երաժշտության ամբիոնի վարիչ Ա.Գևորգյանը, պրոֆեսորներ՝ Ն.Դավթյանը, Հ.Լեյլոյան, Ե.Երզնկյանը, դոցենտներ՝ Գ.Հեբոյանը, Կ.Մարտիրոսյանը, Մ.Ստեփանյանը, Լ.Ավագյանը, Ս.Գայիջյանը, Ս.Թադևոսյանը:

Ամբիոնի վարիչ Ա.Գևորգյանը նշեց, որ դասընթացները ստեղծվում են ըստ 2019-20 ուս.տարվա 2-րդ կիսամյակի դասաբաշխման: Դասընթացների ստեղծումից հետո, կներբեռնվեն առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումները: Նշվեց նաև, որ բոլոր համապատասխան փոփոխությունները կատարվել են առարկայական նկարագրերում և թեմատիկ տրոհումներում:

Որոշեցին՝ Հաստատել 2019-20 ուս.տարվա 2-րդ կիսամյակի առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումները:

Լսեցին՝ Էլեկտրոնային հանձնարարություններ տրամադրելու մասին հարցը:

Արտահայտվեցին՝ Երաժշտության ամբիոնի վարիչ Ա.Գևորգյանը նշեց, որ ելնելով մասնագիտական առանձնահատկություններից Երաժշտության ամբիոնի Գործիքային կատարողականություն, բաժինների համար էլեկտրոնային հանձնարարությունները կատարվում են այլ ձևաչափով :

Քանի որ վերը նշված մասնագիտություններում ուսուցումը կատարվում է անհատական սկզբունքով:

Դասընթացում տեղադրվում է համապատասխան առարկայի դասապրոցեսից մի հատված:

Որոշեցին՝ Էլեկտրոնային դասընթացներում դասապրոցեսից հատվածներ տեղադրել որպես հանձնարարություն:

Լսեցին՝ Էլեկտրոնային հարթակում դասախոսների ուսումնական գործունեության մշտադիտարկման ցուցիչների վերաբերյալ հարցը:

Արտահայտվեցին՝ Ամբիոնի վարիչ Ա.Գևորգյանը նշեց, որ ամբիոնը սահմանել է հետևյալ ցուցիչները.

1-ին ամիս

- Առարկայական նկարագրի առկայություն
- Թեմատիկ տրոհման առկայություն
- Շաբաթական ակտիվություն

2-րդ ամիս

- Համապատասխան ուսանողների առկայություն
- Շաբաթական ակտիվություն

3-րդ ամիս

- Համապատասխան ուսանողների առկայություն
- Շաբաթական ակտիվություն

4-րդ ամիս

- Շաբաթական ակտիվություն
- Հանձնարարություն գործիքի կիրառում / տեսագրություն դասապրոցեսից/

Որոշեցին՝ Էլեկտրոնային հարթակում դասախոսների ուսումնական գործունեության մշտադիտարկման ցուցիչները հաստատել:

Լսեցին՝ Երաժշտության ամբիոնի մշտադիտարկող հանձնաժողովի վերահաստատման հարցը: Քննարկվեց հանձնաժողովի կազմը:

Որոշեցին՝ Հանձնաժողովի կազմում ընդգրկել Երաժշտության ամբիոնի վարիչ Արա Գևորգյանին, ամբիոնի որակի պատասխանատու, դոցենտ Կոլյա Մարտիրոսյանին, դոցենտ Գայանե Հեբոյանին, դոցենտ Մարինա Ստեփանյանին և ամբիոնի Google Classroom համակարգի

պատասխանատու Անահիտ Մկչտչյանին:

Ամեն ամսվա ամբիոնի նիստերում քննարկել մշտադիտարկման արդյունքները, շտկել բացթողումները:

Ուսումնական կիսամյակի սկզբին ամբիոնի նիստերում լսել, քննարկել նկարագրերը և թեմատիկ տրոհումները: Շտկել բացթողումները և հաստատել:

Ուսումնական կիսամյակի ավարտին ամփոփել տարվա արդյունքները:

Լսեցին՝ Ուսումնական կիսամյակների ավարտին դասախոսների հաշվետվությունների հարցը:

Արտահայտվեցին՝ Ամբիոնի վարիչ Ա.Գևորգյանը հանձնարարեց ամբիոնի դասախոսներին ուսումնական կիսամյակի ավարտին՝ հունվար-հունիս ամիսներին ներկայացնել հաշվետվություն Google Classroom համակարգում աշխատանքի վերաբերյալ:

Որոշեցին՝ Ուսումնական կիսամյակի ավարտին հունվար-հունիս ամիսներին ներկայացնել հաշվետվություն Google Classroom համակարգում աշխատանքի վերաբերյալ:

ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ՝

Ա.Կ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

Քարտուղար՝ **Ա.Մկրտչյան**

Կուլտուրայի ֆակուլտետի Երաժշտության ամբիոնի

Մարտի 17-ի նիստի

Արձանագրություն թիվ 5

Օրակարգ՝

1. ՀՊՄՀ-ում ուսումնական գործընթացը առցանց իրականացնելու մասին:

Լսեցին՝ ՀՊՄՀ-ում ուսումնական գործընթացը առցանց իրականացնելու մասին հարցը:

Արտահայտվեցին՝ Երժշտության ամբիոնի վարիչ Ա. Գևորգյանը ներկայացրերց, որ հաշվի առնելով այն, որ մարտի 13–ին, ֆեյսբուքյան ուղիղ եթերում վարչապետ Նիկոլ Փաշինյանը՝ անդրադառնալով կորոնավիրուսի թեմայով կառավարությունում կայացած արտահերթ նիստին հայտարարեց, որ առնվազն մինչև մարտի 23-ը կրթական հաստատությունների աշխատանքը կդադարեցվի, ՀՊՄՀ կրթական գործընթացների կառավարման վարչությունը ուսումնասիրելով աշխարհի առաջավոր բուհերի փորձը, ինչպես նաև ուսումնական գործընթացում պարապուրդ չունենալու նպատակով առաջարկում է համալսարանի բոլոր ֆակուլտետներին ու ամբիոններին վերակառուցել կրթական գործընթացը և ամբողջությամբ անցնել առցանց, հեռավար ուսուցմանը:

ՀՊՄՀ-ն «Google Classroom» էլեկտրոնային ուսումնական հարթակում ունի բացառիկ հնարավորություն լրացնելու բաց թողնված նախորդ պարտադրված արձակուդի դասախոսությունները և շարունակելու ուսումնական գործընթացը համաձայն դասընթացների նկարագրերի թեմատիկ տրոհման:

Առաջարկում ենք իրավիճակին համապատասխան շտապ վերաձևակերպել հարթակում դասընթացների էջերը, ընձեռնել ուսանողին հնարավորություն առցանց ստանալու թեմանները յուրացնելու համար անհրաժեշտ դասախոսությունների, գրականության աղբյուրների մասին լիարժեք տեղեկատվություն, սահմանել անհրաժեշտ առաջադրանքների կատարման համար ժամկետներ:

Որոշեցին՝ Ելնելով երկրում տիրող համաճարակային իրավիճակից անցում կատարել առցանց ուսուցման:

ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ՝ Ա.Կ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

Քարտուղար՝ Ա.Մկրտչյան

Կուլտուրայի ֆակուլտետի Երաժշտության ամբիոնի

Ապրիլի 10-ի առցանց նիստի Արձանագրություն թիվ

6

Օրակարգ՝

1. Պրակտիկաների հետաձգման վերաբերյալ հարցը
2. Միջանկյալների առցանց իրականացման ընթացքի մասին

Լսեցին՝ Պրակտիկաների հետաձգման վերաբերյալ հարցը

Արտահայտվեցին՝ Ամբիոնի վարիչ Ա. Գևորգյանը ներկայացրերց ԷԿԿ բաժնի հաղորդումը պրակտիայի անցկացման մասին:

Հաշվի առնելով 18.03.20 տեսահանդիպման ժամանակ վեր բարձրացված պրակտիկաների հետաձգման վերաբերյալ հարցը, ուղղված Պրակտիկայի կենտրոնի ղեկավար Վահան Սարգսյանին և ԿԳԿևԲ վարչության պետ Մկրտիչ Ավագյանին: Որոշումը հետևյալն է.

2019-2020 ուստարվա 2-րդ կիսամյակի բոլոր պրակտիկաները, բացառությամբ 2-րդ կուրսերի ուսումնաճանաչողական պրակտիկաների, հետաձգվում են մինչև առերես դասերի վերսկսելը: Ուսանողները պրակտիկաների փոխարեն շարունակում են առցանց ուսուցումը թեմատիկ տրոհման մեջ նախատեսված հաջորդ դասից:

Պրակտիկաներին վերաբերող այլ հարցերի դեպքում խնդրում եմ կապվել Պրակտիկայի կենտրոնի ղեկավար պարոն Վահան Սարգսյանի հետ հետևյալ էլ. հասցեով sargsyanvahan@aspu.am

Լսեցին՝ Միջանկյալների առցանց իրականացման ընթացքի մասին

Արտահայտվեցին՝ Ամբիոնի վարիչ Ա. Գևորգյանը ներկայացրեց միջանկյալների անցկացման կարգը:

Խնդրում ենք չակտիվացնել էլեկտրոնային ամփոփագրերը մինչև արտակարգ իրավիճակի դադարեցումը:

Միջանկյալների առցանց իրականացման ընթացքում առաջնորդվել հետևյալ մոտեցումներով.

1. հնարավորինս բոլոր միջանկյալներն իրականացնել առցանց, Google Classroom-ում, Assignment, Docs, Forms, Meet և այլ գործիքների կիրառմամբ, պահպանելով ժամանակացույցիցը,

2. այն ուսանողները, որոնք հարգելի պատճառներով չեն կարողացել մասնակցել միջանկյալներին, կվերահանձնեն դրանք առերես դասընթացներին՝ սահմանված ժամանակացույցով,
3. միջանկյալների առցանց իրականացման մասին նախապես, մի քանի օր առաջ, հայտարարվում է ուսանողին հնարավոր բոլոր եղանակներով՝ տրամադրելով ժամանակացույց,
4. տեղեկատվության տարածումն ապահովել պաշտոնական էլ. հասցեների միջոցով, Classroom-ի դասընթացների և ֆակուլտետային էլ. տեղեկատվական պորտալի միջոցով, սոց ցանցերով, ավագների միջոցով և այլն
5. յուրաքանչյուր էլ. միջանկյալի համար սահմանել հստակ վերջնաժամկետ՝ պայմանավորված դասընթացի յուրահատկություններով։
6. դասախոսը միջանկյալի վերջնաժամկետի ավարտից հետո մեկ շաբաթյա ժամկետում ստուգում է ուսանողների կատարած աշխատանքը և գնահատում։ Դասախոսին իրավունք է վերապահվում անհրաժեշտության դեպքում իրականացնել նաև բանավոր հարցում վերջնական գնահատականը ձևավորելու նպատակով։

ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Քարտուղար՝ Ա.Մկրտչյան

Կուլտուրայի ֆակուլտետի Երաժշտության ամբիոնի

Մայիսի 20-ի առցանց նիստի Արձանագրություն թիվ

7

Օրակարգ՝

1. **Պետական քննությունների անցկացման մասին**
2. **Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմի քննարկում, հաստատում:**

Լսեցին՝ Պետական քննությունների անցկացման մասին

Արտահայտվեցին՝ Ամբիոնի վարիչ Ա.Գևորգյանը նշեց, որ առցանց ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունները ՀՊՄՀ-ում իրականացվելու են ASPU Classroom ուսումնական էլ. հարթակում: Մեր մասնագիտության շրջանակներում առցանց կազմակերպել այդքանը իհարկե ավելի բարդ կլինի, կապված կապի խնդրի հետ: Խնդիրը նրանում է, որ առցանց տարբերակով հիմնականում պատկերը և ձայնը չեն համընկնում: Առաջարկություններ եղան, որպեսզի ուսանողները իրենց կատարումները ուղարկեն նախապես ձայնագրված տարբերակով:

Որոշեցին՝ Ամփոփիչ ատեստավորման համար նախապես պատրաստել ուսանողների կատարումների տեսաձայնագրությունները:

Լսեցին՝ Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմի մասին:

Արտահայտվեցին՝ Ամբիոնի վարիչ Ա.Գևորգյանը ներկայացրերց, որ այս տարի հանձնաժողովի կազմում են ՀՀ ԶՈՒ ԳՇ ռազմանվագախմբային բաժնի պետ, գլխավոր զինվորական դիրիժոր, ՀՀ վաստակավոր արտիստ Արմեն Պողոսյանը, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի վոկալ-տեսական ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Ռուբեն Ասատրյանը, Ռ.Մելիքյանի անվան երաժշտական քոլեջի բաժնի վարիչ Վալենտին Խաչատրյանը: Ամբիոնից հանձնաժողովի կազմում են

երաժշտության ամբիոնի պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր արտիստ Նորայր Դավթյանը և ամբիոնի դոցենտ Կոլյա Մարտիրոսյանը:

Որոշեցին՝ Հաստատել ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կազմը:

ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ՝ **Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

Քարտուղար՝ **Ա.Մկրտչյան**

Կուլտուրայի ֆակուլտետի Երաժշտության ամբիոնի
Հունիսի 19-ի առցանց նիստի

Արձանագրություն թիվ 8

Օրակարգ՝

1. **Պետական քննությունների անցկացման մասին ամփոփում:**
2. **Կիսամյակային քննությունների մասին քննարկում:**

Լսեցին՝ Պետական քննությունների անցկացման մասին ամփոփում:

Արտահայտվեցին՝ Ամբիոնի վարիչ Ա.Գևորգյանը ներկայացրերց, որ քննությունները անցան բավականին լավ և կազմակերպված, կապի հետ կապված խնդիրներից խուսափելու համար ընտրվել էր շատ ճիշտ որոշում նախապես ունենալ տեսաձայնագրություններ:

Ամփոփիչ ատեստավորման քննության հանձնաժողովի նախագահը ևս հայտնել է իր կարծիքը, ասելով, որ այս տարվա պետական քննությունները անցել են բարձր մակարդակով: Ելնելով հանրապետությունում առկա համաճարակային իրավիճակից քննությունը անցկացվեց առցանց: Շրջանավարտները նախապես պատրաստել էին տեսաձայնագրություններ: Նրանք միանգամայն ճիշտ էին ընկալում և տիրապետում դիրիժորական և կատարողական արվեստի տեխնիկային: Նրանց ելույթները վկայում էին այն մասին, որ նրանք ունեն պրոֆեսիոնալ երաժիշտ-մասնագետի պատրաստականություն և նվագախումբ ղեկավարելու ունակություն:

Որոշեցին՝ Տեսաձայնագրությունները հաստատել ամբիոնի նիստում և պահպանել ամբիոնի արխիվում:

Լսեցին՝ Կիսամյակային քննությունների մասին քննարկման մասին:

Արտահայտվեցին՝ Ամբիոնի վարիչ Ա.Գևորգյանը ներկայացրերց, որ քննությունները անցակացվել են առցանց տարբերակով: Հանձնաժողովի մասնակիցները և ուսանողները կմիանան տեսակապին: Հուսանք չենք ունենա շատ տեխնիկական խնդիրներ:

Որոշեցին՝ Հստակեցնել ծրագրերը:

ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ՝ **Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

Քարտուղար՝ **Ա.Մկրտչյան**